Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
նոյեմբերի 24-ի նիստի N 47
արձանագրային որոշման

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև

տրանսպորտի ոլորտում համագործակցության հետագա զարգացման մտադրությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Թուրքմենստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման կարևորությունը,

ձգտելով վստահելի և հավասարազոր գործընկերության հաստատմանը, որը կնպաստի տրանսպորտի ոլորտում փոխշահավետ համագործակցությանը,

ձգտելով ապահովել բարենպաստ պայմաններ երկու երկրների միջև, ինչպես նաև վերջիններիս տարածքով դեպի երրորդ երկրներ տարանցիկ բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների իրականացման դյուրացման համար,

հաստատելով Կողմերի՝ նախկինում ընդունած միջազգային փոխադարձ պարտականությունները տրանսպորտի ոլորտում, և Կողմերի պետությունների միջև կնքված պայմանագրերի շրջանակներում ակտիվ համագործակցության մտադրությունը,

փոխըմբռնման եկան հետևյալի վերաբերյալ՝

1. Կողմերը ընդունում են տրանսպորտի ոլորտում տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հետագա զարգացման և խորացման անհրաժեշտությունը:
2. Կողմերից յուրաքանչյուրը, համաձայն իր ազգային օրենսդրության և փոխադարձության սկզբունքի, ընդունում է իր տարածքում երկու երկրների միջև, ինչպես նաև վերջիններիս տարածքով դեպի երրորդ երկրներ տարանցիկ բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ իրականացնող մյուս Կողմի

տրանսպորտային բոլոր տեսակների գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման անհրաժեշտությունը:
Երկու երկրների միջև, ինչպես նաև վերջիններիս տարածքով դեպի երրորդ երկրներ երկաթուղային, օդային, ծովային, գետային և ավտոմոբիլային տրանսպորտով իրականացվող տարանցիկ ուղևորախադրումների և բեռնափոխադրումների կազմակերպման կարգը որոշվում է Կողմերի պետությունների միջև կնքված միջազգային պայմանագրերի հիման վրա:
Կողմերը մեծ նշանակություն են տալիս այդ պայմանագրերի իրականացմանը, ինչպես նաև՝ հարկ եղած դեպքում, դրանց կատարելագործմանը:
3. Կողմերն ընդունում են երկու երկրների տրանսպորտային ընկերությունների և կազմակերպությունների միջև ուղիղ տնտեսական կապերի զարգացման և տրանսպորտի ոլորտում ընդհանուր ընկերությունների ստեղծման անհրաժեշտությունը:
Կողմերն ընդունում են տրանսպորտային միջոցների արտադրության և նորոգման ոլորտում երկու երկրների ընկերությունների համագործակցության անհրաժեշտությունը:
4. Կողմերը խրախուսում են տրանսպորտի ոլորտում երկու երկրների իրավասու նախարարությունների և գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակումը՝ ներառյալ իրենց երկրում տրանսպորտի գործունեության պայմանների փոփոխությունների մասին տեղեկատվության փոխանակում, որը կշոշափի մյուս Կողմի շահերը:
5. Կողմերն ընդգծում են անմիջական կոնտակտների և, ըստ անհրաժեշտության, երկու Կողմերի պետությունների տարածքով փոխադրումներ կատարելու հարցում բարդությունների առաջացման դեպքում՝ երկուստեք ընդունելի որոշումների կայացման նպատակով երկու երկրների իրավասու նախարարությունների և գերատեսչությունների միջև երկկողմ նիստերի անցկացման կարևորությունը:
6. Սույն Հուշագիրը միջազգային պայմանագիր չէ և չի առաջացնում միջազգային օրենքով կարգավորվող իրավունքներ և պարտականություններ:
7. Սույն Հուշագիրը ուժի մեջ կմտնի ստորագրման պահից:

Կատարված է _____ քաղաքում 201__ թվականի _____ «___» -ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, թուրքմեներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից	**Թուրքմենստանի կառավարության կողմից**